ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2016-2017 ուսումնական տարվա Վայոց ձորի մարզի կրթության ոլորտում կատարված և ծրագրվող աշխատանքների մասին կրթության համակարգի աշխատողների օգոստոսյան խորհրդակցությանը ներկայացվող

28-ը օգոստոսի 2017թ.

Տեղեկանք հանրակրթական համակարգի մասին

	Դպրոցներ ընդամենը	Միջնակարգ դպրոցներ	Հիմնական դպրոցներ	Ավագ դպրոցներ	Վարժարաններ
	50	**31**	**14**	**3**	**2**
Աշակերտների թիվը	**6278**	**3652**	**1837**	**677**	**112**
Ուսուցիչների թիվը	**1062**	**657**	**279**	**93**	**33**
Ուսումնա-օժանդակ անձնակազմ	**510**	**315**	**134**	**42**	**19**
Մինչև 50 աշակերտ ունեցող դպրոցներ	**17**	**6**	**11**	**0**	**0**
50-100 աշակերտ ունեցող դպրոցներ	**12**	**10**	**0**	**0**	**2**
100-ից ավելի աշակերտ ունեցող դպրոցներ	**21**	**14**	**4**	**3**	**0**
Նախակրթարաններ ունեցող դպրոցներ	**14**, որտեղ ընդգրկված է **172** երեխա				
Ներառական կրթություն իրականացնող դպրոցներ	**7**, որտեղ ընդգրկված է **107** երեխա				

Կատարված աշխատանքներ

1. Մարզի դպրոցների մեծ մասը հիմնանորոգված են (40 դպրոցներ):

2. Հիմնավորապես լուծված է ջեռուցման խնդիրը: 19 դպրոցներ ջեռուցվում են գազի լոկալ կաթսայատան միջոցով, մնացածները էլեկտրական ջեռուցիչներով:
3. Դպրոցներում աշխատող 1062 ուսուցիչներից 923-ը (87%-ը) ունեն բարձրագույն մանկավարժական և բարձրագույն կրթություն:
4. Շուրջ 50 ուսուցիչներ ստացել են որակավորման 1-ին աստիճանի տարակարգ: Իսկ Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոցի ուսուցիչ Կարինե Սաֆարյանը ստացել է 2-րդ աստիճանի տարակարգ:
5. Օրենքով սահմանված կարգով յուրաքանչյուր ուսուցիչ մասնագիտական վերապատրաստման դասընթացներ է անցնում 5 տարին 1 անգամ: Անցած ուստարում հերթական 2-րդ վերապատրաստումն են անցել 113 ուսուցիչներ:
6. Բոլոր դպրոցներում հաջողությամբ իրականացվում է ,,Կայուն դպրոցական սնունդ,, ծրագիրը: 1-4 դասարանների 2348 երեխաներ ստանում են սնունդ:
7. Դպրոցներն ապահովված են համակարգիչներով, դրանց թիվը 891-է: Աշակերտ / համակարգիչ հարաբերակցությունը հետևյալն է՝ 7 աշակերտին 1 համակարգիչ: Գործում է ինտերնետ կապը:
8. 1-ին և 2-րդ դասարանների 1189 աշակերտներ ստացել են ուսումնական գրասալիկներ (պլանշետներ), որոնք օգտագործվում են դասի ժամանակ: Ծրագիրը շարունավում է: Նոր ուստարվա 1-ին դասարանցիները ևս կստանան գրասալիկներ:
9. Անցած ուստարում միջնակարգն ավարտել են 479 շրջանավարտներ, որոնցից 225–ը մասնակցել են միասնական քննություններին: Նրանց մոտ 70%-ը ընդունվել են հանրապետության տարբեր պետական բուհ-եր:
10. Անցնող ուստարում դպրոցականների առարկայական օլիմպիադայի մարզային փուլին 16 առարկաներից մասնակցել են շուրջ 600 դպրոցականներ: Նրանցից 52-ը իրավունք են նվաճել մասնակցելու հանրապետական փուլին, որոնցից 11-ը վերադարձել են դիպլոմներով և գովասանագրերով:
11. Մինչև անցած տարի քաղաքային 5 դպրոցներում, իսկ սեպտեմբերի 1-ից բոլոր դպրոցներում կդասավանդվի ,,Ազգային երգ ու պար,, առարկան, որի համար վերապատրաստվել են 45 ուսուցիչներ:
12. Մարզի 8 դպրոցներում ինֆորմացիոն տեխնոլոգիաների միության կողմից ներդրվել են ռոբոտաշինության լաբորատորիաներ:
13. Բոլոր միջնակարգ դպրոցներն ապահովված են ռազմագիտության կաբինետներով և ուսումնական զենքով: Այս տարի այն կթարմացվի:
14. Նոր ուստարվա համար պատվիրվել է 19632 կտոր դասագիրք, 16300 կտոր ստացվել է, մնում ստանալ 3332 կտոր: Մինչև սեպտեմբերի 1-ը դասագրքերը ըստ պատվիրված կբաշխվեն դպրոցներին:
15. Դասագրքերի հետ ստացվել են նաև ուսումնամեթոդական ձեռնարկներ ուսուցիչների համար:

16. Պատվիրվել են նոր ուստարվա դասամատյանները, որոնք դպրոցներին կհատկացվի մինչև սեպտեմբերի 1-ը:
17. Մարզի սոցիալապես անապահով, զոհված, հաշմանդամ դարձած զինծառայողների, աշխարհազորայինների ընտանիքների և ծնողազուրկ 195 երեխաներ իրենց ամառային հանգիստն են անցկացրել Հանքավանի <<Հասմիկ>> ճամբարում:
18. Նոր ուստարում մարզի սահմանամերձ 4 բնակավայրերի դպրոցների բոլոր աշակերտների դասագրքերը կտրամադրվեն անվճար:
19. ՈՒստարվա ընթացքում հաջողությամբ անցկացվել են զանազան կրթական, մշակութային և սպորտային մրցույթներ (<<Կենգուրու>>, <<Մեղու>>, ասմունքի, ընթերցանության, <<Դիպուկ հրաձիգ>>, նախազորակոչային տարիքի մարզական, շախմատի և այլն):
20. Մարզի 5 դպրոցներում տեղադրված են սմարթ դասարաններ և այդ ուղղությամբ տարվում են աշխատանքներ մնացած դպրոցներում ևս ստեղծելու:

ՈՒսուցիչ/աշակերտ հարաբերակցությունը մարզում՝ – 1:6

Դասարանի միջին խտությունը՝ - 12

Մարզային ենթակայությամբ գործող 47 հանրակրթական դպրոցների աշակերտների կրթության կազմակերպման համար նախատեսված է 1 715 764,9 հազ. դրամ:

Պետբյուջեից ներառական կրթության կազմակերպման համար նախատեսվել է 74832,3 հազ. դրամ:

Պետբյուջեից նախակրթարաններում կրթության կազմակերպման համար նախատեսվել է 24807,9 հազ. դրամ:

- ***Հանրակրթական դպրոցների ռացիոնալացման մասին***

Առաջարկվել է Վայքի վարժարանի և Եղեգնաձորի վարժարանի միավորման ձևով վերակազմակերպում համապատասխանաբար Վայքի և Եղեգնաձորի ավագ դպրոցների հետ: Արդյունքում Վայքի վարժարանի շենքը կհատկացվի գերբեռնված Վայքի հիմնական դպրոցին: Իսկ Եղեգնաձորի վարժարանի շենքը կարող է օգտագործվել այլ ուսումնական նպատակներով:

Վերակազմակերպման ձևով միավորման դեպքում կտնտեսվի տարեկան մոտ 80 մլն. դրամ

- Վայոց ձորի մարզի սահմանամերձ Խնձորուտ Բարձրունի և Սերս գյուղերի դպրոցներում կան ուսուցչի թափուր տեղեր (օտար լեզուներ, ռուսաց լեզու, ֆիզկուլտուրա)

- Մարզում գործում է 17 համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություն, որտեղ ընդգրկված են 1044 երեխաներ: Սակայն մի շարք համայնքներում չկան նախադպրոցական հիմնարկներ, որի հետևանքով չի ապահովվում նախադպրոցական կրթության, որպես երեխաներին միջնակարգ կրթության նախապատրաստման օղակի, մատչելիությունը:

Հիմնախնդիրներ

1. ,,Կայուն դպրոցական սնունդ,, ծրագիրն իրականացնելիս դժվարություններ են առաջանում ճաշարանների, տաք ջրի, սանիտարահիգիենիկ պայմանների ստեղծման համար դպրոցների ֆինանսական միջոցների բացակայության պատճառով:
2. Ուսումնական գրասալիկների (պլանշետների) օգտագործման, ինտերնետ կապի անխափան ապահովելու համար համապատասխան մասնագետի բացակայությունը:
3. Նոր ներդրված ,,Շախմատ,, և ,,Ազգային երգ ու պար,, առարկաների դասավանդման վերահսկողության բացակայություն (դրանց համար մշակված չեն առարկայական չափորոշիչներ):
4. Հանրակրթության ոլորտում կրթության որակի վերահսկողության բացակայություն ընդհանրապես:
5. Դպրոցների կառավարման խորհուրդների ոչ արդյունավետ գործունեություն (պատճառը խորհրդի անդամների համար պատասխանատվություն չսահմանելն է):

Վայոց ձորի մարզպետարանի կրթության,

մշակույթի և սպորտի վարչության պետ՝ Ա. Ղազարյան